

ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒԹՅՈՒՆԸ
XII ԳԱՐԻ ԸԱՅ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

4. Ռ. ՊԱՊՅԱՆ

Հայոց պատմության XII դարն ինչպես քաղաքական, այնպես էլ մտավոր-մշակութային տեսակետից շատ հետաքրքիր և շրջադարձային մի ժամանակաշրջան է: Այս իրողության ամենավառ ապացույցը կարելի է համարել հայոց գրականությունը, որը լիովին արդարացնում է իրեն տրված «արծաթի դար»¹ անվանումը:

Այս վերելքն, ըստ էության, բնութագրական էր XII դարի հայ մշակույթի համար ընդհանրապես և արդյունք էր հայ մտքի ու ապրելակերպի մեջ կատարվող աշխարհիկ այն փոփոխությունների, որոնք տիրապետող դարձան այս դարաշրջանում: Եվ իրոք, արդեն XI դարից սկզբից հայ իրականության մեջ ավելի ու ավելի նկատելի էր դառնում դեպի աշխարհականացում տանող մի հոսանք, որ սկսել էր ձևավորվել դեռևս Բագրատունյաց թագավորության օրոք:

«Մինչդեռ քրիստոնյա աշխարհի ուրիշ կողմերում դեռ ընդհանրապես իշխում էր թանձր միջնադարը, 11-րդ դարի առաջին կեսին արդեն մեր կյանքի ու մտածողության մեջ մտել էր մի հեղաշրջում, որով կրոնաճգնավորական ոգին սակավ առ սակավ տեղի էր տալիս մի ուրիշ ոգու, և առաջ էր գալիս ինքնուրույն վերածնություն»², — գրում է Արեղյանը:

Հայ մշակույթի մեջ գծագրվող աշխարհականացման այս նոր միտումը տեղի է տվել մի լուրջ բանավեճի: Մի շարք գիտնականներ փորձեցին հիմնավորել եվրոպական Վերածննդից դեռ շատ սուաջ հայկական Վերածննդի մշակույթի գոյության փաստը³, ոմանք էլ այն համարեցին զարգացած ֆեոդալիզմին բնորոշ հոգևոր-մշակութային վերելք⁴: Հայկական միջնադարն ընդհանուր առմամբ համընթաց ու համարժեք է եվրոպական միջնադարին, սակայն բարդ և շատ կողմերով վիճելի է Վերածննդի ժամանակագրական սահմանների, տարածման, ազգային առանձնահատկությունների հարցը:

Ընդհանրապես, հայկական Վերածննդի դարաշրջանը ամբողջությամբ և մանրամասն գիտական բազմակողմանի հետազոտման կարիք ունի: Եվ նպատակ շնտապնդելով ներդրավել այս հիմնահարցի շուրջն ընթացող բանավեճին՝ փորձենք անդրադառնալ հայ մտքի և մշակույթի մեջ տեղ գտած աշխարհիկ այն փոփոխություններին, որոնք բնութագրական են խնդրառարկա դարաշրջանի համար:

Սկսած XI դարից և հատկապես XII դարում հայ իրականության մեջ ուրվագծվող աշխարհականացման և հին արժեքների վերագնահատման միտումներն առաջին հերթին կապված էին Հայաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցող դրական տեղաշարժերի հետ: Այս կապակցությամբ, ինչպես նշում է Ն. Գաբրիելյանը, «Փաղաքական մոմենտի գերը հայ մտավոր ու կուլտուրական վերելքների մեջ միշտ էլ խոշոր է եղել»⁵:

Իրոք, շատ քիչ թվով ժողովուրդներ կան, որ քաղաքական հանգամանքներն այնքան քրոշիչ լինեին նրանց պատմամշակութային զարգացման գործում, ինչպես հայերը:

XI դարի կեսերին Հայաստանը նորից վերածվում է կոիվների և ապստամբությունների թատերաբեմի: Պատճառն այս անգամ թուրք-սելջուկների արշավանքներն էր, ինչը ճակատագրական նշանակություն ունեցավ ինչպես Հայաստանի, այնպես էլ Արևմտյան Ասիայի քաղաքակրթության համար ընդհանրապես, քանի որ սկիզբն էր նշանավորում դարեր տևող այն ա-

¹ Մ. Արեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1970, էջ 86:

² Նույն տեղում, էջ 17:

³ Տե՛ս նույն տեղը, В. Чалоян, Армянский ренессанс, Ереван, 1963.

⁴ Տե՛ս Ն. Գաբրիելյան, Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական տեսություն, Երևան, 1966, Գ. Փրիզգոյան, Միջնադարյան հայ փիլիսոփայության հանդուցային հարցերի շուրջ, Երևան, 1966:

⁵ Ն. Գաբրիելյան, Եղվ. աշխ., էջ 128:

հավոր մղձավանջի և ահաբեկի շափերի հասնող կոտորածների, որոնք ճակատագրի դաժան թե-
լադրանքով պետք է բաժին ընկներ հայությանն ու տեղաբնակ այլ ազգերի:

«Միջին Ասիայի խորքերից մոտ հիսուն տարվա ընթացքում, առաջ էր խաղացել և կայս-
րության դռները բախում էր մի ահավոր, վայրենի ուժ, որ իր հետ բերում էր քաղաքակրթու-
թյան կատարյալ կործանում: Սա սոսկ գինվորական մի արշավանք չէր, այլ ազգերի տեղա-
փոխություն, որ գալիս էր նրանց համար բնակության տեղեր որոնելու և այնտեղ ընդմիջա
քնակվելու: Այս բավական չէ: Տեղափոխվող ցեղերը վաչկատուն տնտեսության ձևերի մեջ էին
ապրում, ասել է՝ նստակյաց տնտեսությունը նրանց համար խորթ էր, խորթ էր մասնավանդ
այն բարձր կուլտուրան, որ մշակել էր այդ նստակեցությունը տասնյակ դարերի ընթացքում»:⁴
Այսպիսի աղետալի հանգամանքներում էր բացվում մ. թ. 2-րդ հազարամյակի արշալույսն
Արևմտյան Ասիայի պատմության մեջ, որ պետք է դարերով կանխորոշեր նրա ողջ պատմա-
մշակութային միջավայրը և այնտեղ բնակվող քաղաքակիրթ մարդկության գոյության պայ-
մաններն ու անմխիթար վիճակը:

XII դարի սկզբին Հայաստանում նկատվում է քաղաքական ուժերի որոշ համախմբում,
որը պայմանավորված էր Վրաստանի հղորացմամբ: Սելջուկյան լայնածավալ պետության տրո-
հումից հետո Հայաստանում ստեղծված ամիրությունների և գորեղացող Վրաստանի միջև ամ-
բողջ 12-րդ դարում տեղի է ունենում համառ պայքար, որն ի վերջո ավարտվում է վերջինիս
օգտին՝ ազատագրելով Հայաստանի զգալի մասը:

Սակայն XII դարում և դրան հաջորդած ժամանակներում հայ ժողովրդի կենսունակության
յուրօրինակ նմուշ էր Կիլիկիան:

Հայոց թագավորության անկումը հայերի արտագաղթի սկիզբը դրեց դեպի Բյուզանդիա:
Հայ գաղթականությունը հատկապես կենտրոնացավ Կիլիկիայում, որտեղ 11-րդ դարի կեսին
հայերն արգեն կազմում էին մեծամասնություն, որն էլ հիմք հանդիսացավ նրանց քաղաքա-
կան նկրտումներին:

Կիլիկիայի հայկական պետությունը քաղաքական և մշակութային մեծ դեր խաղաց հայ
ժողովրդի պատմության մեջ: Նրա 300-ամյա գոյությունը, երբ մայր հայրենիքում հայերը
զրկված էին պետականությունից, հայ ժողովրդի անկախության ձգտման հաստատումը եղավ:
Ուստի իրավացի է Ն. Գաբրիելյանը, երբ նշում է, որ «Կիլիկիան Հայաստանը... ունեցավ այն
նշանակությունը, որ հայերին անմիջականորեն կապեց Եվրոպայի հետ, շփման մեջ դրեց նոր
ժողովուրդների ու նոր կուլտուրաների հետ՝ դուռ բանալով կուլտուրական նոր ազդեցություն-
ների համար»:⁵

Փաստորեն, XII դարում Հայաստանում և Կիլիկիայում առկա քաղաքական պայմանները
բավականաչափ նպաստավոր էին տնտեսության և մշակույթի զարգացման համար: Այս իմաս-
տով մեծ նշանակություն են ձեռք բերում հատկապես միջնադարյան քաղաքներն իրենց վաճա-
րական ու արհեստավոր ազգաբնակչությամբ: Սելջուկյան արշավանքների ժամանակ քաղաք-
ները ծանր հարված ստացան՝ ենթարկվելով կողոպուտի և ավերածության: Նրանց վերա-
կանգնումը և կյանքի վերելքը սկսվեց XII դարի կեսերին, որը պայմանավորված էր ողջ Մեր-
ձավոր Արևելքում տեղի ունեցող ապրանքային արտադրության և առևտրի բավականաչափ ա-
րագ զարգացմամբ: Այն փաստորեն դարձավ համահայկական երևույթ, որը նկատելի էր ինչպես
Կիլիկիան Հայաստանում, այնպես էլ Մեծ Հայքում:

Նոր զարգացած քաղաքներից աչքի էին ընկնում Անին, Կարսը, Միսը, Այասը: Անին տի-
պիկ օրինակն էր այդ շրջանի մեծ քաղաքների, որ ներկայացնում էր միջնադարյան նոր ժող
իրականությունը՝ քաղաքային մշակույթը: Այն եղել է ոչ միայն բերդ և մայրաքաղաք, այլև
առևտրական, արդյունաբերական և մշակութային մեծ կենտրոն: Օտար տիրապետության տակ
գտնվելու ժամանակ էլ, ինչպես գրում է Օրբելին, այդ քաղաքի ներքին կյանքը թիչ է փոխվել,
և «կապ ունենալով Առաջավոր Արևելքի մահմեդական երկրների քաղաքային կյանքի ընդհա-
նուր զարգացման հետ, առատությամբ ընդունել է հարեան ժողովուրդների ստեղծագործության
հարուստ արդյունքները»:⁶

Բնականաբար սկսեցին զարգանալ նաև ապրանքադրամային հարաբերությունները: Փողը,
ոսկին, անշարժ գույքը կենտրոնանում էին առանձին անհատների ձեռքին, որոնք կազմում էին
մի նոր սոցիալական խավ: Ֆեոդալական շրջանի երկու իշխող դասերի կողքին ազդեցիկ դիրք էր
սկսում գրավել նոր ձևավորվող խավը՝ հարուստ քաղաքացիությունը: Հասարակության սոցիա-
լական կառուցվածքը փոխվելով՝ փոխվում էին և հասարակական գիտակցությունը, գաղափա-
րական և արժեքային մոտեցումները կրոնի, բարոյականության, արվեստի և գրականության
վերաբերյալ:

⁴ Լեռ, Երկրի ժողովածու, հ. 2, Երևան, 1966, էջ 692:

⁷ Ն. Գաբրիելյան, Եղվ. աշխ., էջ 130:

⁶ И. Орбели, Развальные Ани, СПб., с. 4.

Քաղաքների և քաղաքային կյանքի զարգացումը խոշոր նշանակություն ունեցավ հայ մշակույթի զարգացման գործում: Քաղաքների ծաղկման, մանավանդ քաղաքային դասի առաջացման հետեւեղծով կարեւոր տեղաշարժեր են նկատվում բնակչության ինքնագիտակցության, ինչպես նաև կենցաղի մեջ: Սկսել էր ձևավորվել քաղաքային մշակույթը, որն իր մարմնացումը գտավ առաջին հերթին քաղաքաշինության և ճարտարապետության մեջ:

XII դարի երկրորդ կեսից քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը զգալի զարգացում են ապրում՝ նշանավորելով ճարտարապետական կառուցողական արվեստի նվաճումներով առավել հարուստ մի նոր փուլ: Այս վերելքի համար խոշոր նշանակություն ունեցավ հատկապես Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանի ճարտարապետական ժառանգությունը: Այս դարը կարելի է համարել հայկական շինարարական արվեստի վերածնության շրջան, որը, չնայած տեղական պատերազմներին, շինարարական մի ժամանակաշրջան էր, երբ շատ քանդված շինությունների տեղ նորերն էին կառուցվում, քայքայվածները վերանորոգվում էին, և բոլորովին նոր շինություններ երևան գալիս:

Ինչպես նշել է Թորամանյանը. «Ջաբարյաններու տիրապետության սկզբնական շրջանին, ստեղծելով նախկին ավանդույթներով խառն հայ ճարտարապետության մի գեղեցիկ վերածնություն»:

Այս շրջանում են սկսում առաջանալ և կազմակերպվել վանքային համալիրներ՝ եկեղեցական ու աշխարհիկ շենքերով՝ հիանալիորեն ներդաշնակված միմյանց ու բնության հետ: Առավել հատկանշականը ճարտարապետության աշխարհիկ ճյուղի աննախընթաց զարգացումն էր՝ կապված ծավալուն քաղաքաշինության հետ: Առանձնապես բարերար էր քաղաքային միջավայրը, որտեղ աշխարհիկ ճարտարապետությունը եկեղեցականի հետ միասին կրում էր քաղաքային առաջադիմած ապրելակերպի ազդեցությունը⁹:

Արվեստի ու ճարտարապետության զարգացման գործում, ինչպես նախորդ շրջանում, այնպես էլ այժմ, առաջատար դեր էր խաղում քաղաքամայր Անին, որը բացառիկ օրինակ էր Հայաստանի մյուս քաղաքների համար ինչպես քաղաքաշինության, այնպես էլ ճարտարապետության ասպարեզում: Այս շրջանում Անին հարստացավ եկեղեցական և աշխարհիկ նոր շենքերով: Եկեղեցական ճարտարապետությունն Անիում զարգանում է քաղաքացիականին համընթաց՝ ենթարկվելով միևնույն գեղարվեստական սկզբունքներին: Այս հանգամանքն էլ հիմք է ծառայել Ն. Մառին՝ նշելու Անիի ճարտարապետության յուրահատուկ, զուտ քաղաքային ոճը¹¹: Ցավոք, սակավ տեղեկություններ կան Կիլիկյան հայկական ճարտարապետության մասին: Սակայն հիմնվելով պատմիչների մի շարք դրավոր վկայությունների վրա՝ կարելի է ենթադրել, որ շնայած բյուզանդական ճարտարապետության հետ ունեցած ընդհանրություններին, Կիլիկյան հայկական ճարտարապետությունը հավատարիմ է մնացել ազգային ճարտարապետական ավանդույթներին՝ արվեստի մյուս բնագավառների հետ միասին կազմելով հայկական միջնադարյան մշակույթի բաղկացուցիչ մասը:

Մշակույթի նոր վերելքը, բնականաբար, դրսևորվեց նաև արվեստի մյուս բնագավառներում: Ինչպես քանդակագործության և որմնանկարչության, այնպես էլ մանրանկարչության մեջ զուգակցվում են կրոնական և աշխարհիկ թեմաները, նկատելի է դառնում աստվածաշնչյան նյութերի աշխարհիկ վերաիմաստավորումը: Գրքային գեղանկարչության և մանրանկարչության աննախընթաց վերելք է սկսվում հատկապես Կիլիկյան Հայաստանում, որտեղ ձևավորվում են առանձին դպրոցներ (Գրագարկ, Հոսմուկլա, Սկեռա), որոնք էապես նոր երևույթ էին հայ իրականության մեջ: Հայ մանրանկարչության պատմության երկարամյա հետազոտող Լ. Ալարյանի կարծիքով՝ «Կիլիկյան Հայաստանում ստեղծվում է գրքի գեղարվեստական ձևավորման մի արվեստ, որը նշանավորում է հայկական մանրանկարչության բարձրակերտը, յուրահատուկ տեղ գրավելով հայկական միջնադարյան կուլտուրայի պատմության մեջ»¹²:

Հետ նրա, այս դպրոցների շարքում հատկապես առանձնանում է լամբրոնյան իշխանների հոգևոր կենտրոն Սկեռան, որը XII դարի երկրորդ կեսից դարձավ Կիլիկյան մանրանկարչության նոր ոճի հիմնական օջախներից մեկը՝ տալով մի շարք անվանի մանրանկարիչներ, որոնցից առավելապես հայտնի են Վարդանը, Կոստանդինը և Գրիգոր Մլինճեցին:

Արժանահիշատակ է հատկապես Գրիգոր Մլինճեցու պատկերազարդած՝ Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը: Այս ձեռագիրը բացառիկ է, քանի որ կրում է Գրիգոր Նարեկացուն պատկերող մանրանկարները՝ շքուսուրբեր մեկնաբանություններով՝ Նաբեկացին փրիսոփա, Նաբեկացին ազոբոզ, Նարեկացին ճգնաժող և վերջին մանրանկարում՝ Նարեկացին Քրիստոսից:

⁹ Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, Երևան, 1942, էջ 367:

¹⁰ Տե՛ս Վ. Հառուբյունյան, Միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետությունը, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957, թիվ 8:

¹¹ Տե՛ս Н. Марр, Ани, Ереван, 1939, էջ 35:

¹² Լ. Ալարյան, Կիլիկյան մանրանկարչության սկզբունքները, «Գ: ամառանասիրական հանգիստ», 1960, թիվ 3, էջ 39:

օրհնվելիս: Նարեկացու բարդ անհատականության դրսևորումը նման եղանակով նոր երևույթ էր, որով այդ մանրանկարները հզակի տեղ են գրավում հայ միջնադարյան արվեստի մեջ¹³:

Կիլիկյան մանրանկարչության ամենածաղկուն շրջանը XIII դարն է՝ ի դեմս Թորոս Ռուսելի:

Սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանում մեծապես տուժեցին նաև գիտությունն ու կրթական գործը, գիրն ու գրականությունը: Սակայն XII դարի քաղաքական ու սոցիալ-տնտեսական վերելքը բարենպաստ պայմաններ ստեղծեց վերջիններիս զարգացման համար: Այս շրջանում երևան է գալիս նոր հետաքրքրություն դեպի հին հունական, ինչպես նաև հին հայկական մշակույթի գործիչները, դեպի նրանց բնագիտական, պատմական ու փիլիսոփայական երկերը:

Շուանդուն կերպով սկսում են ուսումնասիրվել, թարգմանվել և մեկնաբանվել անտիկ հեղինակների ստեղծագործությունները: Նկատելիորեն ընդլայնվում է կրթական գործը: Երկրի զանազան վայրերում սկսում են հիմնվել գիտական ու կրթական կենտրոններ, որոնցում դասավանդվում են գրականություն, արվեստ, բնագիտություն, փիլիսոփայություն և այլն: Զարգանում են նախորդ դարերում ստեղծված բարձրագույն տիպի կրթական կենտրոնները՝ վարդապետարանները, հիմնադրվում են նորերը՝ թե բուն Հայաստանում և թե, մասնաձևեր, Կիլիկիայում: Կրթական այս կենտրոններին կից հիմնվում են գրադարաններ, որոնք իրենց տրամադրության տակ ունեին բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր: Արժանահիշատակ է հատկապես քաղաքամայր Անիի գրադարանը, որտեղ պահպանվում էին հազարավոր ձեռագրեր:

Մինչև XII դարը Հայաստանում գոյություն չի ունեցել մարդկային իրավահարաբերությունները կարգավորող որևէ աշխարհիկ օրենսգիրք: Հասարակությունը ղեկավարվել է եկեղեցական կանոններով: Այս իրողությունը թերևս կարելի է բացատրել անկախ պետականության երկարատև բացակայության հանգամանքով: Շատ հնարավոր է, որ Բագրատունյաց թագավորության վերջին շրջանում, երբ բավականաչափ ծաղկել էր քաղաքային կյանքը, և զարգացել էին սոցիալ-տնտեսական հարաբերությունները, արդեն հասունացել էր հասարակության տարբեր դասերի ու խավերի, նրա անդամների իրավահարաբերությունները կարգավորող որևէ օրենսգրքի ստեղծման պահանջը, սակայն սելջուկյան հանկարծահաս աղետը կատարյալ քայքայում է հասցնում երկրի սոցիալ-տնտեսական կյանքը և անհնար է դարձնում այս ձեռնարկությանն ուղղված ամեն մի գործողություն:

Դրությունը միանգամայն փոխվում է, երբ քաղաքական իշխանության ղեկը Հայաստանում ստանձնում են Զաքարյանները, միաժամանակ սկսում է հզորանալ Կիլիկիայի հայկական իշխանությունը: Թե բուն Հայաստանում և թե Կիլիկիայում պահանջ է առաջանում գրավոր օրենսգրքի միջոցով իրավագրելու երկրի ներսում գոյություն ունեցող դրությունը: Կիլիկիայում այս ուղղությամբ սկսում է աշխատել Ներսես Լամբրոնացին, իսկ Արևելյան Հայաստանում գրավոր օրենսգրքի ստեղծմանը ձեռնամուխ է լինում Մխիթար Գոշը:

Թեև «Դատաստանագրքի» ստեղծման ժամանակ Մխիթար Գոշն օգտվել է օտար աղբյուրներից, այնուամենայնիվ հաշվի է առել և հայկական սովորույթները, և ազգային իրավաբանական ավանդույթները: Ազգային ինքնուրույնության և միասնության խորը գիտակցությունն է ընկած նրա աշխատության հիմքում, որն ունի ընդգծված ազգային բնույթ և զաղափարախոսություն: «Դատաստանագրքի» բոլոր հոդվածներում կարմիր թելի նման անցնում է ազգային խտրության գաղափարը, ուր հայը հակադրվում է «այլազգուն», ուր իրավական գերակշռությունը պատկանում է հայությանը»¹⁴: Բացի այս առանձնահատկությունից, ինչպես իրավա-ցիտրոն նշում է Խ. Թորոսյանը, «Գոշի «Դատաստանագրքում» կան մարդասիրական բնույթի առաջադիմական օրենքներ: Նա պահանջում է, որ ստրուկի կամ ճորտի կյանքի դեմ ոտնձգողը քրեական պատասխանատվության ենթարկվի, անկախ նրանից, թե ով է հանդեպողը և սոցիալական աստիճանակարգության մեջ ինչ դիրք է գրավում»¹⁵:

Մխիթար Գոշի շատ զաղափարներ առաջ են անցնում նրա պարած դարաշրջանի պահանջներից: «Հռոմեական, ինչպես և ժամանակի եվրոպական իրավունքի համար ելակետը անձն էր, ուստի շեղ մարդ առհասարակ, կա ստրուկ և տեր, ճորտ և աղնվական: Հայկական իրավունքի ելակետը մարդն էր՝ անկախ այն բանից նա իշխող էր, թե ենթակա»¹⁶, — գրում է Խ. Թորոսյանը: Անշափ մեծ է եղել Մխիթար Գոշի այս նշանավոր երկի կիրառական և պատմամշակութային նշանակությունը:

Երկրի ընդհանուր տնտեսական վերելքը, քաղաքների զարգացումը նկատելիորեն նպաս-

¹³ Տե՛ս Լ. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը 12—13-րդ դարերում, Երևան, 1964, էջ 54—63:

¹⁴ Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. Ա, Երևան, 1939, էջ 80:

¹⁵ «Հայ ժողովրդի պատմություն», 8 հատորով, հ. 3, Երևան, 1976, էջ 820:

¹⁶ Նույն տեղում, էջ 821:

տեցին բնական գիտությունների առաջընթացին: Այն առավել նկատելի էր հատկապես կենսաբանություն և բժշկագիտության մեջ: Կենսաբանական և բնաշխտական միտքը Հայաստանում սկսում է զարգանալ Հին Հայաստանի, Հունաստանի, Հռոմի, Բյուզանդիայի և Արևելքի ժողովուրդների, մասնավորապես արաբական բժշկագիտության ձեռք բերած նվաճումների ազդեցության ուղիքով: Հայ բժիշկները հաճախ են մեղբորմունք կատարում համաշխարհային բժշկագիտության դասական հեղինակների՝ Հիպոկրատի, Գալենի, Իբն Սինայի գործերից: Բժշկագիտության ուսուցումը պատշաճ տեղ էր գրավում Անիի, Սանահինի, Տարսուսի, Սսի և այլ դպրոցներում:

Հայ բժշկագիտության պատմության քաջագիտակ Ա. Կծոյանը նշում է, որ Հայաստանում բժշկագիտությունը զարգանում էր գերազանցապես կյանքի փորձի, դիտարկման և կուտակված փաստերի ընդհանրացման ճանապարհով¹⁷: Այս սկզբունքը առաջնորդող հաճախացավ հայ ականավոր բժիշկ և մտածող Մխիթար Հերացու համար, որի «Ջերմանց մխիթարություն» դասական երկը բացառիկ երևույթ էր միջնադարյան հայ իրականության մեջ: Հատկանշական է, որ «Տիվանդությունների առաջացման, պատճառագիտության ու ախտածնության հարցերը քննարկելիս ոչ մի անգամ Մխիթար Հերացին չի դիմում միատիկա-մոզական և աստվածաբանական հասկացությունների հետ կապված գործոններին»¹⁸:

Հենվելով իր կատարած հետազոտությունների վրա և քննադատաբար օգտագործելով համաշխարհային բնագիտական գրականությունը՝ Մխիթար Հերացին բժշկագիտական մի շարք վարկեր և սկզբունքային նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ հասավ զգալի նվաճումների և ճիշտ եզրահանգումների՝ անելով նաև արժեքավոր կոանոմներ, որոնք հետագայում ստացան իրենց գիտական հիմնավորումը:

Բնագիտական ընդգծված միտում ունի նաև Ներսես Շնորհալու «Յաղագս Երկնից...» պոեմը, որի մեջ, Մ. Աբելյանի վկայությամբ, «նկարագրված է երկնքն ըստ ժամանակի հասկացության՝ արեգակ, լուսին, յոթն մոլորակներ, տասներկու կենդանակերպներ և այլն: Հայոց գրականության մեջ այդ մի նոր գրական տեսակ է, մի նոր թեմայով, ոչ լիովին կրոնական բովանդակության և հետադայում առաջ է բերել նմանողներ»¹⁹:

Շնորհալու այս աշխատությունն իր գիտական արժանիքներով, բնական երևույթների ու երկնային մարմինների տիեզերական հատկանիշների գիտական բացատրությամբ, անկասկած, գերազանցում է նախորդներին և որակական մի նոր աստիճան է իր ժամանակի գիտության մեջ ընդհանրապես:

Բնագիտության զարգացումը իր հերթին նպաստեց փիլիսոփայական մտքի բնագիտական ուղղության զարգացմանը: Բնափիլիսոփայական ուղղության ձևավորողը հայ իրականության մեջ հռչակավոր գիտնական, բանաստեղծ և փիլիսոփա Հովհաննես Սարկավազ Իմաստասերն է, որը մասթեմատիկական և աստղաբաշխական հաշվարկների հիման վրա բարեփոխեց հայկական տոմարը, հատուկ աշխատություն նվիրեց թվերի տեսությանը, զբաղվեց երկրի և տիեզերքի կառուցվածքի հարցերով: Զօխտելով աստվածաբանության անհրաժեշտությունը՝ միաժամանակ նա առաջ էր քաշում բնագիտության և առհասարակ աշխարհիկ գիտությունների հարցը՝ գտնելով, որ միայն Սուրբ գիրքը և եկեղեցու սուրբ հայրերի ստեղծագործությունները բավարար չեն բնության մասին ճշմարիտ գիտելիք ձեռք բերելու համար, որ հարկավոր է նաև այնպիսի գիտություն, որը գոյություն ունենա եկեղեցուց դուրս և նրանից անկախ:

«Եվ հայ այն մատենագիրները, որոնք շեն բավարարվել սուկ աստվածաբանությամբ և փիլիսոփայական-գոյաբանական լուծումները տալիս ձգտել են հիմնավորել դրանք բնագիտությամբ, բնագիտական գրություններով ու փաստերով, այդպիսիք առավել շահով են երևան բերել փիլիսոփայական-գիտական դատողությունների համակարգ և նրանց գոյաբանությունը առավել շահով է հանդես գալիս որպես ոչ թե աստվածաբանություն, այլ բնափիլիսոփայություն: Միջնադարի այդպիսի հայ փիլիսոփաներից հիշատակման արժանի են հատկապես Հովհաննես Սարկավազը...»²⁰:

Անշուտ ընդգրկուն և տարաբնույթ են նրա բնագիտական եզրահանգումները, որոնք, անշուշտ, կարող էին բովել փորձնական գիտություններով զբաղվող գիտնականի կողմից՝ միաժամանակ հիմք հանդիսանալով շատ կարևոր տեսական ընդհանրացման համար. «Զեմ այնց դիտահաւան, որ առանց քննութեան հաւատամ ամենայն բանից և պատրիմ, զի առանց քննելոյ և փորձելոյ չի պատեհ հաւանել ամենայն բանից»²¹:

17 Տե՛ս Ա. Կծոյան, Բժշկագիտությունը Հայաստանում 11—14-րդ դարերում, Երևան, 1968:

18 Ա. Կծոյան, Մխիթար Հերացի, Երևան, 1968, էջ 7:

19 Մ. Աբելյան, նշվ. աշխ., էջ 116:

20 Գ. Գրիգորյան, Միջնադարյան հայ փիլիսոփայության բնութագրման հարցի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1984, թ. 1, էջ 45:

21 Գ. Գրիգորյան, Հովհաննես Իմաստասերի փիլիսոփայական հայացքները, ՊՐՀ, 1958, թ. 3, էջ 199:

Իմաստասերի այս միտքը կարևորվում է այն հանգամանքով, որ միջնադարի պայմաններում, երբ համատարած իշխում էր կրոնական գաղափարախոսությունը և եկեղեցու ուսմունքներն ընդունվում էր որպես անքննելի և անվերապահ ճշմարտություն, նա համարձակվում է խոսել գիտելիքների փորձնական ստուգման մասին՝ միաժամանակ ընդգծելով փորձի էական դերը մարդու կյանքում և նրա աշխարհայացքի ձևավորման մեջ. «Առանց փորձի, կարծիքը չի կարող ճշմարիտ համարվել, քանի որ փորձն է հաստատուն և անևերկրայ»²²:

Իր այս պահանջով իմաստասերը, փաստորեն, հին ըմբռնումների վերագնահատման հարցն է դնում, որովհետև դրանցից ոչ մեկը փորձի վրա չի հիմնված: Նշանակալից է նաև այն, որ նա ոչ թե սովորական փորձի մասին է խոսում, այլ «հաստատուն և անևերկրայ»՝ գտնելով, որ գիտությունը պետք է հիմնվի փորձով ստուգված և գիտական հիմնավորում ստացած փաստերի վրա: Սա, ինչ խոսք, նոր երևույթ էր հայ միջնադարի համար, որը միևնույն ժամանակ նոր ընթացք էր տալիս հայ աշխարհիկ մտքի զարգացմանը:

Հովհաննես Իմաստասերի փիլիսոփայական ուսմունքը մարդուն մղում է սովորել քննությունից, իր ստեղծագործության մեջ ընդօրինակել նրան: Այս թեմայով նա հյուսել է մի ամբողջ պոեմ, որի հիմքում ընկած է քննության և քնական երևույթների խորը ընկալումն ու ճշմարիտ իմացությունը: Հայ գրականության մեջ այն հայտնի է ռեան իմաստութեան...» անունով և իր ձևով ու բովանդակությամբ մի նշանակալից նորություն էր մեր հին գրականության մեջ: Ինչպես նշում է Աբեղյանը՝ «Թեև դա պատահամամբ փրկված չլինի կորստից, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման ստեղծությունը թերի կմնար: Եվ ո՞վ գիտե, քանի այդպիսի արժեքավոր բանաստեղծություններ ոչնչացել են»²³:

Քննության այսպիսի արժեքավորումն արդեն իսկ մի մեծ նորություն էր հայ գրականության մեջ և արդյունք էր այն նոր ոգու ու ազատախոսության, որ նկատվում էր XII դարում:

Հովհ. Սարկավագի կողմից մշակութային շատ արժեքների վերագնահատումը և դրա հետ կապված նոր մտածելակերպն էլ ավելի խորացրին հայ մտքի ուրվագծով այն բեկումը, որի սկիզբը դրել էր Գրիգոր Մագիստրոսը, և որի շարունակողները դարձան կիրիկահայ բանաստեղծները՝ Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Գրիգոր Տղան և նրանց ժամանակակիցներն՝ իրենց ինքնատիպ ստեղծագործական աշխարհով:

XII դարը հայերին միայն քաղաքական խռոշը շարժում չէր բերում: Այս շարժումը լիակատար և իրական չէր լինի, Լթև նրա հետ զուգրիթաց շրթնանար և մտավոր շարժումը, որի մեծավոր արտահայտությունը գրականությունն էր: Այս դարից մենք ժառանգել ենք գրական զինված հարստություն: XII դարում գեղարվեստական գրականությունը նախորդ ժամանակներում ձեռք բերած նվաճումների հիման վրա բարձրացավ զարգացման մի նոր ու աննախընթաց աստիճանի: Այն սկսել էր աստիճանաբար բաժանվել եկեղեցուց և աշխարհիկ կերպարանք ստանալ:

Փաղափարական բովանդակության տոտմով այս դարում կարծես մրցում էին աշխարհիկ և հոգևոր թեմաներն ու գաղափարները: Սակայն երկու դեպքում էլ նկատվում էր գեղարվեստական խոսքի, մտածողության և աշխարհընկալման զգալի առաջընթաց: Աշխարհականացման ոգին այս տարբեր թևերի մեջ ապրում էր նոր վերելք՝ զուգակցվելով հայրենասիրական գաղափարների հետ: Հատկանշականը հոգևոր, պաշտոնական թևի ներքին փոփոխություններն էին, քանի որ ժողովրդական բանահյուսությունը միշտ էլ սնվել է աշխարհիկ գաղափարներով և իր ժամանակակից թարգմանն է հանդիսացել: «Կրոնական ոգու թուլացումը, որ սկսված էր արդեն 11-րդ դարից, բնական զարգացման հետևանքով առաջատվությունը շարունակել է մինչև 12-րդ դարի կեսերը և հետո մինչև 17-րդ դարը, ազդելով նաև մեր գրականության զարգացման ընթացքի վրա»²⁴:

Կրոնադավանարանական և բարեօլաշտական գաղափարների կողքին արտահայտություն է գտնում հայրենիքի և քննության սերը: Գրողները մոտենում էին ժողովրդին և նրան հուզող խնդիրներին:

XII դարի գրական մեծագույն նվաճումներից մեկը պետք է համարել առակագրության ձևավորումն ու զարգացումը: Առաջինները եղան Միխիթար Գոշը, Վարդան Այգեկցին: Աշխարհիկ գրականության մեծարժեք կոթողներ էին նրանց կաղված առակները, որոնք այդպես էլ մնացին չզերանցված հայ գրականության պատմության մեջ:

Հատկանշականն այս դարաշրջանի համար նաև այն էր, որ կրոնական ողբից հետո հայ գրականությունը գտնում էր արդեն իր կարևոր ու մեծ թեմաներից մեկը՝ հայրենասիրությունը: Հայրենասիրական թեման ժամանակի պահանջն էր միաժամանակ, քանի որ զարթնում և աճում էր ազգային ինքնագիտակցությունը, համագգային հայրենասիրության գաղափարը, և հենց այս

²² Ղ. Ալիշան, Գուշիկը Հայրենյաց հայոց, հ. Բ, Վևեստիկ, 1921, էջ 262:

²³ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1970, էջ 72:

²⁴ Նույն տեղում, էջ 153:

մոտիվներով ստեղծվեցին ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի պատմաքաղաքական ողբերգ-որոնք թեև պահպանում էին միջնադարյան ողբին բնորոշ տարրեր, բայց միաժամանակ արտացոլում էին պատմաքաղաքական հայացքների նոր որակ: Փաստորեն առաջին անգամ ստեղծվում էր հասարակական նշանակությամբ և ուղղմահայրենասիրական ուղղվածությամբ մի նոր պոեզիա, որի ծանրության կենտրոնում դրված էին ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ հարցեր: ու համաժողովրդական շահերը:

Եթե ընդհանուր գծերով ներկայացնենք այս ժամանակաշրջանի գրականությունը, ապա պետք է նշենք, որ, ընայած հոգևոր թեմաների առատությանը, հայ գրականության մեջ միաժամանակ առաջ մղվեցին մարդու և բնության, հոգու և մարմնի, հայրենիքի ու ազատության թեմաները: Գրականությունն արտացոլում էր երկրի և ժողովրդի վիճակը, հասարակական նշանակություն ունեցող հարցեր՝ նպաստելով հայ ժողովրդի մտավոր առաջընթացին ու մշակույթի զարգացմանը:

Այսպիսով, XII դարում Հայաստանում և Կիլիկիայում մշակույթի զարգացումը հատկանշվում էր աշխարհականացման ակնհայտ միտումով, մարդու և բնության կապի, մարդկային էության իրական արժեքավորմամբ: Եվ մենք այստեղ էլ, ինչպես հայ մշակույթի պատմության բոլոր փուլերում, տեսնում ենք մեր կյանքում տեղի ունեցող երևույթների փոփոխություններ, ձևերի ու պահանջների կերպարանափոխություններ, տեսնում ենք մի ամբողջական կյանք՝ իր յուրահատկություններով ու օրենքներով, որոնք նրա գոյությունն ու զարգացումն են պայմանավորել:

К. Р. ПАНОЯН—Тенденции секуляризации в армянской культуре XII века.— Как необъемлющий процесс армянская политическая жизнь в каждую эпоху приобретает свое теоретическое обобщение, свое особое качество политической мысли.

Автор статьи утверждает, что постоянно, проживающие и творящие на своей исторической родине носители армянской политической мысли, высший вид культуры и уровень цивилизации, выступали поэтапно как плод благоприятного момента исторической эпохи, обусловленный коренными социально-экономическими, политическими и политологическими сдвигами и взлетами.

В хронологическом плане эти этапы совпадают с великими взлетами эпохи: первый—V века, второй—IX—XIV вв., третий XVIII в., четвертый—XIX в., пятый—современным подъемом.